ապարանջաններ և մատնիներ՝ 3—4 մատանի։ Ահա նրա արդուզարը և նա պարտական է ամենայն խոնարհութեամբ իր նոր գնացած տանը գտնուող բոլորին, 6 տարեկանից մինչև ծերունիներին ծառայելու, որպէս սպասաւոր։ Նա իրաւունք չունի երևալու մարդկանց մէջ — «խոր ջահել զայֆի (կնոջ) համար այիբ (պակասութիւն) ա խօսալը ու մարդամէջ երևալը»։ Նրանք գլխով կամ շարժումներով են յայտնում իրենց միտքը։ Բացի այդ, ամբողջ տարուայ ընթացքում միայն երկու անգամ եկեղեցի գնալու իրաւունք ունեն — Ծննդեան և Զատկի տօներին, այն էլ հաղորդելու համար։ Այսպէս, նորահարսը ստրկական մի կեանք է վարում տան մէջ, ուր բոլոր անդամները հրամայում են նրան։ Նոյնիսկ ամուսինն իշխում է անսահման կերպով իր կնոջ վրայ. նա հրամայում է, պահանջում է իր կամքը կատարել տալու համար, իսկ եթէ կինը համարձակւում է նրա հրամանի դէմ գնալ, այն ժամանակ լսում է կոպիտ և անվայել խօսքեր, յանդիմանութիւն, շատ անգամ էլ նոյնիսկ ծեծւում է. մի խօսքով նա հոլու գործիք է և ստրուկ հպատակ իր ամուսնոյն։

Մահ, թաղումն և մեռելոց։ Երբ Փէրիայում մէկը մեռնում է, ազգականները և հարևան կանայք լցւում են մեռելատանը և հին հայկական սովորութեան համաձայն սկսում են բարձրաձայն ողբալ. եթէ մեռնողը տան հայրն է, նրա գովքն են անում, — «Մեր տան խէր ու բարաքեաթն էիր, տան մեծաւորը, մեզ շարշտայ (հրաման) տուող», իսկ եղբայրը ողբում է քրոջն. «Քոյրիկ, տունն անտէր է մնացել», քոյրն էլ մխիթարում է նրան ասելով «Քեզ մեռնեմ, տանդ էլ մեռնեմ եղբայր»։

Եկեղեցիների թիւը խիստ շատ է լինում, որովհետև հանգուցեալի համարեա բոլոր ազգականները, ծանօթներն ու բարեկամները, հայկական հնաւանդ սովորութեամբ, իրենց պարտքն են համարում ներկայ լինել մեռելի տանը։ Իսկ հանգուցեալի ամեն մի մօտ ծանօթի ու բարեկամի գալու միջոցին սգաւորները նորոգում են իրենց սուգը բարձրաձայն ողբալով։